



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒ ՆԵՈՒ ԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ
*N9,10(71, 72) օգոստոսի 21 – հոկտեմբերի 20***

31 հոկտեմբերի 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ	2
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ	6
2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ	10
2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննության ու նների	10
2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ	11
2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ	14

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Մի քանի աղբյուրից ստացման ենթակա (ստացված) եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված)՝ սոցիալական վճարների առավելագույն չափը գերա-
-------------------	---

	գանցող գումարները մասնակիցներին վերադարձնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	31.07.2014թ., N 813-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 46 (1059), 27.08.2014թ.
Ուժի մեջ է	06.09.2014թ.

Համառոտ նկարագիր

Սույն որոշմամբ ապահովվել է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթի կատարումը, ըստ որի ՀՀ կառավարության կողմից սահմանվելու է մի քանի աղբյուրից ստացման ենթակա (ստացված) եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված)՝ սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները մասնակիցներին վերադարձնելու կարգը: Որոշմամբ սահմանված դրույթները վերաբերում են այն անձանց, որոնք ստանում են ձեռնարկատիրական եկամուտ և աշխատավարձ, և վերջիններիս կողմից հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարները գերազանցում են սոցիալական վճարի առավելագույն չափը («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մաս): Սահմանվել է, որ սույն որոշման գործողությանը տարածվում է 2014 թվականի հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությանների վրա:

Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N1676-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	31.07.2014թ., N 826-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 46 (1059), 27.08.2014թ.
Ուժի մեջ է	28.08.2014թ.

Համառոտ նկարագիր

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014թ. հունիսի 1-ից գործում է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ նոր օրենքը և «Եկամտային հարկի և սոցիալական վճարների անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ Օ-247-Ն օրենքը՝ վերջիններիս առանձին դրույթների կիրառումն ապահովելու նպատակով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1676-Ն որոշման մեջ:

Որոշմամբ հստակեցվել է «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն 2014 թվականի հունիս և (կամ) օգոստոս ամիսներին դիմում ներկայացնելու դեպքում սոցիալական վճար կատարելու

պարտականությունն ից ազատվելու պահը (եթե «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դիմումը ներկայացվում է (դիմումը մուտքագրվում է տեղեկատվական համակարգ) 2014 թվականի հունիս և (կամ) օգոստոս ամիսներին (բայց ոչ ավելի ուշ, քան հունիս ամսվա անձնավորված հաշվարկը ներկայացնելը), ապա անձը ազատվում է նաև 2014 թվականի հունիս և օգոստոս ամիսների աշխատավարձից սոցիալական վճար կատարելու պարտականությունն ից, իսկ եթե ներկայացվում է հունիս ամսվա անձնավորված հաշվարկը ներկայացնելուց հետո, ապա անձը ազատվում է սոցիալական վճար կատարելու պարտականությունն ից՝ սկսած հաջորդ ամսվա 1-ից (օգոստոս ամսվա աշխատավարձից):

Նախագծով կարգավորված են նաև սոցիալական վճար կատարելու պարտականություններից հրաժարվելու և սոցիալական վճար կատարելը վերսկսելու դիմումները հարկային մարմին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

Փաստաթուղթ	«Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից սոցիալական վճարի կատարումը դադարեցնելու վերաբերյալ դիմումը հարկային մարմին ներկայացնելու կարգը, դիմումի ձևը և կուտակային կենսաթոշակ ստանալու մասին դիմումի վերաբերյալ հարկային մարմնի կողմից գործատուներին տեղեկացնելու կարգը սահմանելու մասին» ⁷ ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	31.07.2014թ., N 827-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 46 (1059), 27.08.2014թ.
Ուժի մեջ է	06.09.2014թ.

Համառոտ նկարագիր

2014թ. հունիսի 1-ից գործող «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ նոր օրենքի կիրառմամբ պայմանավորված՝ սույն որոշմամբ սահմանվել են կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից սոցիալական վճարի կատարումը դադարեցնելու վերաբերյալ դիմումը հարկային մարմին ներկայացնելու կարգը, դիմումի ձևը և կուտակային կենսաթոշակ ստանալու մասին դիմումի վերաբերյալ հարկային մարմնի կողմից գործատուներին տեղեկացնելու կարգը:

Փաստաթուղթ	«Հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննությունն անցկացնող հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջարկման կարգը սահմանելու և ՀՀ Կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի N872-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
------------	--

Ամսաթիվը և համարը	28.08.2014թ., N 896-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 48 (1061), 10.09.2014թ.
Ուժի մեջ է	11.09.2014թ.

Համառոտ նկարագիր

Հիմք ընդունելով ՀՀ Նախագահի 2014 թվականի ապրիլի 30-ի ՆՅ-97-Ն հրամանագրի դրույթները, համաձայն որոնց ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն վերակազմակերպվել է՝ միանալով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ արդյունքում սույն որոշմամբ վերանայվել է հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննությունն անցկացնող հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջարկման կարգը:

Փաստաթուղթ	«Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ասրանքների դրոշմավորման համար «2010» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները կիրառությունից հանելու և «2010» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ասրանքների իրացումն արգելելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	11.09.2014թ., N961-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 51 (1064), 24.09.2014թ.
Ուժի մեջ է	04.10.2014թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ 2014 թվականի հոկտեմբերի 1-ից կիրառությունից հանվել են Հայաստանի Հանրապետությունն ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ասրանքների դրոշմավորման համար «2010» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները:

Սահմանվել է, որ 2015 թվականի հունիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Հայաստանի Հանրապետությունն ներմուծված կամ Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ «2010» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված արտադրանքի իրացումը:

Փաստաթուղթ	«ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N298 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	18.09.2014թ., N989-Ն

Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 52 (1065), 01.10.2014թ.
Ուժի մեջ է	11.10.2014թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի «Առևտրի իրականացման վայրի (տոնավաճառ, շուկա և այլն) կազմակերպիչների կողմից առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնողների վերաբերյալ հարկային մարմիններ տեղեկություններ ներկայացնելու մասին» N298 որոշումը: Սույն որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հաստատված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2008թ. օգոստոսի 21-ի N ՀՕ-154-Ն օրենքի ընդունմամբ:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	08.09.2014թ., թիվ 586-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 24 (503), 01.10.2014թ.
Ուժի մեջ է	01.10.2014թ.

Համառոտ նկարագիր

Ս/թ հոկտեմբերի 1-ից ընտանիքի անդամների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հարկման նոր՝ արտոնյալ համակարգի ներդրմամբ պայմանավորված (ՀՕ-134-Ն)՝ ՀՀ ֆինանսների նախարարի սույն հրամանով սահմանվել է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը:

Փաստաթուղթ	«Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության և ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի եկամտային հարկի տարեկան անձնավորված հաշվետվության ձևերը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	08.09.2014թ., թիվ 587-Ն

Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 24 (503), 01.10.2014թ.
Ուժի մեջ է	01.10.2014թ.

Համառոտ նկարագիր

Ս/թ հոկտեմբերի 1-ից ընտանիքի անդամների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հարկման նոր՝ արտոնյալ համակարգի ներդրմամբ պայմանավորված (ՀՕ-134-Ն)՝ սույն հրամանով հաստատվել են ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ և ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտի եկամտային հարկի տարեկան անձնավորված հաշվետվության նկատմամբ ձևերը՝ 6 հարկերի մասին 7 ՀՀ օրենքի հոդված 13.10-ի 2-րդ կետի համաձայն:

Փաստաթուղթ	«Առևտրական (առք ու վաճառք) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից մինչև 2014 թվականի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված և 2014 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդի վերաբերյալ հարկային մարմին ներկայացվող տեղեկանքի ձևը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	08.09.2014թ., թիվ 588-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 24 (503), 01.10.2014թ.
Ուժի մեջ է	01.10.2014թ.

Համառոտ նկարագիր

Ս/թ հոկտեմբերի 1-ից «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-128-Ն) 10-րդ հոդվածով պայմանավորված՝ սույն հրամանով հաստատվել է առևտրական (առք ու վաճառք) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից մինչև 2014 թվականի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված և 2014 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդի վերաբերյալ տեղեկանքի ձևը:

Փաստաթուղթ	«ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հունիսի 17-ի N 437-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	09.09.2014թ., թիվ 595-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 24 (503), 01.10.2014թ.
Ուժի մեջ է	11.10.2014թ.

Համառոտ նկարագիր

Հրամանի համաձայն դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարը հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) հարկ վճարողին վերադարձման դիմումի ձևերում ավելացվել են պիտանելիության ժամկետում չիրացված, ՀՀ կառավարության սահմանած կարգով ապրանքների դուրսգրման ամսաթվերը և րացնելու տողեր:

Փաստաթուղթ	Շրջանառության հարկ վճարողին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ հայտարարագրի ձևը, հայտարարագրի ներկայացման և հարկային մարմին էլեկտրոնային համակարգ տվյալների մուտքագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ Ֆինանսների նախարարի հրաման
Ամսաթիվը և համարը	25.09.2014թ., թիվ 639-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 26 (505), 15.10.2014թ.
Ուժի մեջ է	11.10.2014թ.

Համառոտ նկարագիր

Ս/թ հոկտեմբերի 1-ից «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-128-Ն) 8-րդ հոդվածի համաձայն՝ սույն հրամանով հաստատվել են.

1. շրջանառության հարկ վճարողին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ հայտարարագրի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,

2. շրջանառության հարկ վճարողին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման և հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ տվյալների մուտքագրման կարգը՝ համաձայն N 2 հավելված: Կարգով կանոնակարգվում են առևտրական (առք ու վաճառքի) գործունեություններ իրականացնող շրջանառության հարկ վճարողներին ապրանքներ մատակարարած ու օրենքով սահմանված համապատասխան փաստաթուղթ չտրամադրած հարկ վճարողների ու ձեռք բերված ապրանքների վերաբերյալ էլեկտրոնային կամ թղթային եղանակով հայտարարագրի ներկայացման և հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ տվյալների մուտքագրման հարաբերությունները:

Փաստաթուղթ	ՀՀ Ֆինանսների նախարարի 2013 թվականի օկտյեմբերի 27-ի մասին» ՀՀ Ֆինանսների նախարարի հրաման
------------	--

Ամսաթիվը և համարը	31.07.2014թ., թիվ 489-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 25 (504), 02.10.2014թ.
Ուժի մեջ է	12.10.2014թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություններ են կատարվել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1045-Ն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվության ձևում: Մասնավորապես, հաշվարկ-հաշվետվության ձևում նախատեսվել է, որ բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների կողմից հաշվետու եռամսյակի համար N1.1 և N1.2 հավելվածները կազմվում են առնվազն երկու օրինակներից, մինչև և հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

1) N1.1 հավելվածը՝ վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու, արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության և իրացման, ՀՀ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման և իրացման, մակերևութային ջրերի օգտագործման, ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների, կենսաապառարկների օգտագործման վճարների համար վճար վճարողի կողմից ներկայացվում է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության գրանցման,

2) N1.2 հավելվածը՝ պինդ օգտակար հանածոների (բացառությամբ մետաղական օգտակար հանածոների) մարված պաշարների, հանքային ջրերի, աղի արդյունահանված պաշարների համար վճար վճարողի կողմից ներկայացվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության գրանցման:

Գրանցված N 1.1 և N 1.2 հավելվածների հիման վրա այդ ժամկետին հաջորդող 5 օրվա ընթացքում կազմված բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունը (պարտադիր կարգով դիմային մասը, սահմանված կարգով գրանցված N 1.1 և N 1.2 հավելվածները) ներկայացվում է համապատասխան հարկային մարմին: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ N 1.1 կամ N 1.2 հավելվածներով նախատեսված վճարներ վճարող չհամարվելու դեպքում համապատասխան հավելվածը հարկային մարմին կարող է ներկայացվել առանց համապատասխան լիազորմարմնում գրանցման:

Վճարների գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով օրենքով սահմանված կարգով ու դեպքերում առնվազն երկու օրինակից կազմված ճշտված հավելվածները վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու, արտադրության և սպառման թափոնները շրջակա

միջավայրում սահմանված կարգով տեղադրելու, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության և իրացման, ՀՀ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման և իրացման, մակերևութային ջրերի օգտագործման, ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների, կենսապաշարների օգտագործման վճարների համար վճար վճարողի կողմից ներկայացվում է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը գրանցման, իսկ պինդ օգտակար հանածոների (բացառությամբ մետաղական օգտակար հանածոների) մարված պաշարների, հանքային ջրերի, աղի արդյունահանված պաշարների համար վճար վճարողի կողմից ներկայացվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությունը գրանցման (միաժամանակ N1.1 և N1.2 հավելվածներով նախատեսված վճարներ վճարող համարվելու դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե որ հավելվածում է կատարվում ճշտումը): Գրանցված N1.1 և N1.2 հավելվածների հիման վրա կազմված բնապահպանական և բնօգտագործման վճարների ճշտված հաշվարկ-հաշվետվությունը (պարտադիր կարգով դիմային մասը, սահմանված կարգով գրանցված N1.1 և N1.2 հավելվածները) հավելվածների գրանցմանը հաջորդող 5 օրվա ընթացքում ներկայացվում է համապատասխան հարկային մարմին (N1.1 կամ N1.2 հավելվածներով նախատեսված վճար վճարողներ չհամարվելու դեպքում համապատասխան հավելվածը հարկային մարմին կարող է ներկայացվել առանց լիազորմարմնում գրանցման):

2.3 արկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

2.1 Այնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

2014 թվականի օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննությունն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 7 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 8 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

2014 թվականի օգոստոսի 20-ից մինչև հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 60 որոշում, որից բավարարվել են 21, բավարարվել են մասնակի 3, մերժվել են 29, կասեցվել են 5, կարճվել են 2 որոշումներ:

2.2 Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ¹

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2014թ.		
			օգոստոս	հունվար-օգոստոս	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-օգոստոս) % ²
1	ՀՀ պետական բյուջեի հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	մլն դրամ	90,631.3	683,361.2	104.2
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	87,872.2	661,517.7	103.5
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	40,633.0	284,770.6	108.2
1.1.2	Ծահուլթահարկ	մլն դրամ	7,844.1	76,719.4	90.0
1.1.3	Եկամտային հարկ ³	մլն դրամ	25,493.2	192,031.0	108.8
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	4,212.2	30,328.0	159.7
1.1.5	Ծրջանառության հարկ	մլն դրամ	1,251.3	10,586.9	132.9
1.1.6	Արտոնագրային վճարներ	մլն դրամ	571.5	4,485.2	98.3
1.1.7	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճարներ	մլն դրամ	288.0	2,183.7	28.0

¹ Ներառված են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով եկամուտները

² Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշի հարաբերությունն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ

³ Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները

1.1.8	Մաքսատու ըրք	մլն դրամ	4,513.5	32,761.6	102.5
1.1.9	Այլ հարկային եկամուտներ ⁴	մլն դրամ	3,065.5	27,651.3	64.4
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,759.1	21,843.5	129.3
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	189 610	1 567 397	102.5
2.1	Արտահանում	մլն դրամ	47 606	396 703	101.5
2.2	Ներմուծում	մլն դրամ	142 004	1 170 694	102.9

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2014թ.		
			սեպտեմբեր	հունվար-սեպտեմբեր	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-սեպտեմբեր) % ⁵
1	ՀՀ պետական բյուջեի հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	մլն դրամ	92,829.2	776,190.5	104.8
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	89,123.2	750,640.9	104.0
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	39,077.0	323,847.6	109.2

⁴ (Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ գույքահարկը և հողի հարկը (պետական բյուջեի հաշվեգրվող), բնապահպանական և բնօգտագործման պարտադիր վճարները, ճանապարհային վճարները, պարգեցված հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաձախականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները (25.1, 25.2, 26, 27, 28, 30, 31 հոդվածների մասով), բենզինի և դիզելային վառելիքի հաստատագրված վճարը, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը, ՀՀ տարածք ներմուծվող ԱՏԳ ԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օդիների համար քվոտան)

⁵ Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշի հարաբերությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ

1.1.2	Շահուկ թահարկ	մլն դրամ	11,672.2	88,391.7	91.0
1.1.3	Եկամտային հարկ ⁶	մլն դրամ	24,978.1	217,009.1	109.3
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	4,164.2	34,492.2	156.1
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	1,195.4	11,782.3	129.2
1.1.6	Արտոնագրային վճարներ	մլն դրամ	639.6	5,124.8	97.5
1.1.7	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճարներ	մլն դրամ	268.9	2,452.7	28.3
1.1.8	Մաքսատուրք	մլն դրամ	4,129.4	36,891.0	103.8
1.1.9	Այլ հարկային եկամուտներ ⁷	մլն դրամ	2,998.3	30,649.5	63.0
1.2	Պետական տուրք	մլն դրամ	3,706.1	25,549.6	134.1
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	220 405	1 787 580	103.1
2.1	Արտահանում	մլն դրամ	56 953	453 557	101.5
2.2	Ներմուծում	մլն դրամ	163 451	1 334 023	103.6

⁶ Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները

⁷ (Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ գույքահարկը և հողի հարկը (պետական բյուջե հաշվեգրվող), բնապահպանական և բնօգտագործման պարտադիր վճարները, ճանապարհային վճարները, պարգեցված հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաձախականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները (25.1, 25.2, 26, 27, 28, 30, 31 հոդվածների մասով), բենզինի և դիզելային վառելիքի հաստատագրված վճարը, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը, ՀՀ տարածք ներմուծվող ԱՏԳ ԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օդիների համար քվոտան)

2.3 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2014թ. օգոստոս
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1311
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1020
1.2	Իրավաբանական անձ	հատ	291
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	5 696
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	105
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջարկված գումարներ	մլն դրամ	873,5
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2014թ. հունվար-օգոստոս 13140
5.1	Բավարարված	հատ	1231
5.2	Մերժված	հատ	38
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	11398
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	8.626,2
7	Վարչական տույժ նշանակելու մասին	հատ	20883

	որոշումների թիվ		
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	405,3
8	Չարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2274
8.1	Չարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	8.179,6
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	141
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1.459,0
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում`	հատ	608
10.1	Ավարտված	հատ	17
10.2	Մեղադրական եզրակացությունը դատարան ուղարկված	հատ	17
10.3	Կասեցված	հատ	18
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1.460,6

Յ/Յ	Ցուցանիշ	Չափման միավոր	2014թ. սեպտեմբեր
-----	----------	------------------	------------------

1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1834
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1498
1.2	Իրավաբանական անձ	հատ	336
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	6153
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	134
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջարկված գումարներ	մլն դրամ	838,3
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2014թ. հունվար- սեպտեմբեր 14585
5.1	Բավարարված	հատ	1318
5.2	Մերժված	հատ	43
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	10921
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	9.397,9
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	23067
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	454,8

8	Յարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2480
8.1	Յարկ վճարողների գույքի արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	8.545,4
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	150
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1.597,2
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	652
10.1	Ավարտված	հատ	17
10.2	Մեղադրական եզրակացությունը դատարան ուղարկված	հատ	17
10.3	Կասեցված	հատ	20
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1.845,5